ԵՄ ՀԱՆՈՒՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ.
ԱՌԱՎԵԼ ՈՒԺԵՂ ՀԱՄԱՅՆՔՆԵՐ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ծրագիրը համաֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից

vhs DVV International

Փոքրաքանակների ազգամտության և բազմակարգության ասոցիացիա

ՄԵԴԻԱ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ

ՍԻՎԱՍ Ժողովրդավարական կրթության հայկական կենտրոն - ՍԻՎԱՍ

ԸՆՑ ԱՎԱԶԱՆ

Ենթադրամաշնորհի նկարագրողական

Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Ենթադրամաշնորհառուի անուն և Պայմանագրի համարը	§ԲԼԵՋԱՆ¦ բնապահպանական, սոցիալական, բիզնեսի աջակցության ՀԿ SGPP-G-07
Ենթադրամաշնորհային ծրագրի անվանումը	§Բաց Ավազան¦
Հաշվետվության ժամանակը և իրականացման կարգավիճակը	01.02-31.07.2020 Ավարտված
Բյուջե և իրական ծախսեր	Ընդհանուր բյուջեն - 3,133,400 1-ին փոխանցում – 1,253,360, 2-րդ փոխանցում 1880040 Ծախսվել է – 3,132,848

1. **Հաշվետվության ժամանակաշրջանի գործողությունների ամփոփում**

¦Բաց Ավազան§ ծրագրի նպատակն է՝ երիտասարդների ներգրավմամբ նպաստել Գեղարքունիքի մարզի, մասնավորապես ՍԵԳԱՄԱ կլաստերի համայնքների զբոսաշրջության և այս ոլորտում գործարար միջավայրի զարգացմանը:

Ծրագրի իրագործման համար նախատեսվել են գործողություններ 3 փուլով:

Ծրագրի 1-ին փուլն ամենաերկար ժամանակահատվածն է, որտեղ ընդգրկվել են ենթանպատակներին հասնելու տարբեր գործողություններ:

- ✓ Ծրագրային թիմի կողմից մշակված օնլայն գրանցման միջոցով ընտրել ենք 19 երիտասարդների (նախատեսված 12-ի փոխարեն) ՍԵԳԱՄԱ կլաստերի համայնքներից, որոնցից 5-ը տղաներ են:
- ✓ Պատրաստվել և կնքվել են պայմանագրեր և՛ ծրագրային թիմի, և՛ փորձագետների համար:
- ✓ Մշակվել են դասընթացների մոդուլներ, կազմվել օրակարգեր և PPT-ներ:
- ✓ Կատարվել են համարյա բոլոր անհրաժեշտ ծրագրի բյուջեով նախատեսված գնումները:

Կապված աշխարհում և երկրում տիրող իրավիճակից, COVID 19-ով պայմանավորված, երկրում հայտարարված երկամյա կարանտինի պատճառով Ծրագրային թիմի կողմից որոշում է կայացվել՝ չփոխել ծրագրով նախատեսված ժամկետները, այլ կատարել իրավիճակից բխող մի քանի

ՀՀ պատմության և բնության հուշարձաններ, բանահավաքություն/2օր/

Անգլերեն /2 օր/



Բնապահպանություն/2 օր/



Քարտեզագրում

4 թեմաներով էլ դասընթացների ընթացքում մասնակիցները ստացել են և՛ տեսական գիտելիքներ, և՛ հնարավորություն են ստացել այն գործնականում կիրառելու՝ տնային աշխատանքների միջոցով: Յուրաքանչյուր դասին մասնակցել են 20-25 շահառուներ, ներառյալ՝ Ծրագրային թիմի անդամները:

- Բանահավաքության դասընթացներից (https://bit.ly/2SBCkEd) հետո հավաքագրված պատմությունները, լեգենդները մշակվել են և տեղադրվել բլոգում, առանձին բաժնում: Գործընթացը շարունակական է, հավաքագրված լեգենդները շատ եմ, ուղղակի մշակման փուլում

են, դրանք հասնելի կլինեն նաև ՀԿ-ի կայքում՝ տեղեկատվական շտեմարանում, ակումբի աշխատանքների ընթացքում https://bit.ly/3aep0gx :

- Անգլերենի դասընթացներին (https://bit.ly/3buWI0A) մասնակիցներին տրվեց նաև նախապես կազմված անգլերեն-հայերեն տուրիզմի ոլորտում հաճախ օգտագործվող բառերի բառարանը և երկխոսությունները, դրանք նույնպես տեղադրված են ՀԿ-ի կայքում:
- Բնապահպանության դասընթացները՝ (https://bit.ly/2Lv1r7W) նույնպես ինտերակտիվ էին: Դասընթացի 1-ին օրը, որպես բանախոս, խոսեց Գեղարքունիքի մարզպետ Գնել Սանոսյանը, ով ներկայացրեց մարզի բնապահպանական խնդիրները, դրանց լուծմանն ուղղված պետական ծրագրերը:
- Քարտեզագրման դասընթացները՝ (https://bit.ly/33IyJdP): դոնորի թույտվությամբ, մեծ մասն իրականացվեցին օֆլայն, որոնք տեղի ունեցան պահպանելոով հակահամաճարակային բոլոր կանոնները՝ բաց տարածք, դիմակներ, ձեռնոցներ, տարածքի պարբերաբար ախտահանում և այլն: Դասընթացների իրականացման համար նախապես մշակվել էր էկոտուրիզմի, էլեկտրոնային տեղորոշման և քարտեզագրման դասընթացների մոդուլներ (5 օրյա, յուրաքանչյուր օր 3 ական ժամով): Բայց նախատեսված 5 օրյա դասընթացների փոխարեն տեղի ունեցավ 4 օրյա դասընթաց՝ դեմ առ դեմ և 2 առցանց դասընթացներ՝ օգտագործելով ZOOM հարթակը և մեկ դասընթաց էլ լրացուցիչ՝ դեմ առ դեմ ֆորմատով, որն ավելի շատ ինտերակտիվ էր: Այն ուսուցողական էր, քանի որ մասնակիցները տեղում 3 փորձնական երթուղիներ գծեցին տեղում և դրանցով արշավներ իրականացրեցին: Արշավներից հետո փորձագետի հետ քննարկվեցին թերություններն ու հետագա անելիքները:

Ծրագրի ***2-րդ Փուլը*** ներառում էր Համայնքային քարտեզագրում և վերլուծություն, որի ընթացքում. ՍԵԳԱՄԱ կլաստերի համայնքների 19 երիտասարդներ ստացան գիտելիքներ ու հմտություններ.

- քարտեզագրման ժամանակակից մատչելի մեթոդներով՝ հեռահար և տեղային. Սովորեցին հեռախոսի օգնությամբ տեղադիրքի որոշման և ֆոտո, վիդեո նկարահանումների միջոցով համապատասխան տեղեկատվության հավաքագրման հմտություններ և իրենց գիտելիքները հնարավորություն ունեցան փորձարկելու իրենց բնակավայրերում՝ տեղային քարտեզագրում իրականացնելու համար:
- էկոտուրիզմի, էկոտուրիստական ենթակառուցվածքների ստեղծման, քարտեզագրման մատչելի ծրագրերի, գործիքների և հավելվածների միջոցով համայնքների էկոզբոսաշրջային ուղիների և վայրերի հեռահար էլեկտրոնային ուսումնասիրության և էկոզբոսաշրջության ծրագրերի վերաբերյալ:
- տեղեկատվության հավաքագրման, հեռախոսի GPS գործառույթի օգնությամբ, տեղադիրքի որոշման, և՛ ֆոտո, և՛ վիդեո նկարահանումների միջոցով տեղեկատվության հավաքագրում, նույնիսկ ինտերվյու անելու հմտություններ

Ծրագրի ընթացքում կատարվել է.

- Ուսուցողական այցելություն Հաղարծնի վանքի մերձակայքում, դեպի «Դիլիջան» ազգային պարկում գտնվող «Թաքնված ջրվեժի արահետ» ծրագրային թիմի, ծրագրի երիտասարդների համար,, որի օրինակով երիտասարդները կարողացան քարտեզագրել ՍԵԳԱՄԱ կլաստերի ծրագրով նախատեսված արահետները: Այցելության ընթացքում երիտասարդներին տրվեց հավելյալ տեղեկատվություն նոր երթուղիների ստեղծման պրոցեսի վերաբերյալ

- ՍԵԳԱՄԱ կլաստերի՝ Սևան-Լճաշեն-Գավառ-Նորատուս-Մադինա-Մարտունի, հարակից համայնքների նախատեսված էկոզբոսաշրջային ուղիների և վայրերի դաշտային ուսումնասիրություն՝ մեքենայով և ոտքով: Ուղիղ գծով մոտ 54 կմ, մեքենայի ճանապարհներով և այլընտրանքային ուղիներով՝ մինչև 69 կմ փոխարեն, իրականացվել է 30 կմ քայլք, 175 կմ մեքենայով, 40 կմ հեծանիվով: Այն ներառում է թե՛ ամբողջ թիմի միասին անցած ճանապարհը, թե՛ փորձագետի կողմից առանձին արված հետազոտությունները:
- ՍԵԳԱՄԱ կլաստերի՝ Սևան-Լճաշեն-Գավառ-Նորատուս-Մադինա-Մարտունի, հարակից համայնքների էկոզբոսաշրջային հնարավորությունների ընդհանուր ուսումնասիրություն և նախնական էլեկտրոնային քարտեզագրում՝ հետագայում մարզի էկոզբոսաշրջային հնարավորությունների հետ այդ ամենը համադրելու միջոցով լիարժեք փաթեթների ստեղծման նպատակով (համայնքում շրջելով, համայնքի անդամների հետ հանդիպելով և նրանց այս գործում անմիջականորեն ներգրավելով, որը հետագայում նորաստեղծ ակումբի աշխատանքներում կզարգացվի: Այժմ առկա է Գեղարքունիքի մարզի ինտերակտիվ քարտեզը, որը ներառում ե շուրջ 40 շերտ, որը ներառում է (հյուրատներ, սննդի, արհեստագործական, ենթակառուցվածքների, գազալցակայանների, բանկերի, բանկոմատների և այլ նմանատիպ ծառայությունների մատուցման վայրեր և այլն) տարբեր ենթակառուցվածքներով, այն տեղադրված է Բաց Ավազան բլոգում https://bit.ly/2PGVkzg ,
- Տարբեր բնույթի տվյալների (ուղիների GPS հետագծեր, էկոզբոսաշրջային վայրերի լուսանկարներ, բնութագրական տեքստեր՝ տեղացիներից, համայնքի զանազան հետաքրքիր վայրերի և ավանդույթների մասին հարցազրույցների ձայնագրությունների աուդիո և վիդեո-ֆայլեր՝ ըստ անհրաժեշտության) հավաքագրմանն ու արխիվացմանը վերոնշյալ ուսումնասիրության բոլոր փուլերում (1.հեռահար-նախապատրաստական, 2.դաշտային, 3.ընթացիկ տեղագրական և 4.ամփոփիչ), ամբողջը տեղադրված է աշխատանքային բլոգում, որոնք այնքան ժամանակ կմնան անձնական, մինչև ակումբի շրջանակներում արահետների բովանդակության տեքստերը կկազմվեն, հետո նոր կհրապարակվեն:
- Էկոզբոսաշրջային ենթակառուցվածքների էսթետիկ և բնապահպանական համապատասխանություն շրջակա միջավայրին, անհրաժեշտության դեպքում՝ կատարվել են շտկումներ

Ծրագրի 3-րդ փուլով տեղի ունեցավ Քայլարշավ և աղբահավաքություն, որի ընթացքում տեղի ունեցավ վերջնական որոշված երթուղիով քայլարշավ: Մինչ դա, դեղի ունեցավ.

- Հավաքագրված տեղեկատվությունը սեփական տվյալների բազաներում ներառելու և համալրելու գործընթաց, մասնակիցները սովորել են դրայվով աշխատել, նկարներ, երթուղիներ տեղադրել
- ստեղծվել է Բաց ավազան ՖԲ խումբ, որը դեռ աշխատանքային է, ակումբի աշխատանքների զուգահեռ այն կդառն ահանրային

Ծրագրի ընթացքում պետք է ապահովեինք քարտեզագրման արդյունքների ներբեռնում տարբեր օնլայն հարթակներում՝ www.viewranger.com, wikiloc.com, www.hikearmenia.org, ինչպես նաև՝ www.blejan.org կայքում, օգնել դրանց պատշաճ ներկայացմանը Հայաստանի զբոսաշրջության պետական կոմիտեին, հայկական տուրիստական ասոցիացիային և այլ կառույցներին: Տեղեկացնեմ, որ www.hikearmenia.org կայքում տեղեկատվության տեղադրման համար դեռ թույտվություն է անհրաժեշտ մեզ, քանի որ կայքի պատասխանատու թիմն անձամբ պետք է ստուգի երթուղիները, որից հետո նոր տեղադրի, իսկ

www.viewranger.com, wikiloc.com այս կայքերում տեղեկատվության ներբեռնումը դեռ գործնթացի մեջ է, այն կրկին կիրականացվի նորաստեղծ ակումբի աշխատանքներին զուգահեռ:

Ծրագրի ընթացքում գրանցված հաջողություններ

Հաջողություն ենք համարում այն, որ.

- ✓ ծրագրի նկատմամբ հետաքրքրությունը երիտասարդների և պատանիների շրջանում շատ մեծ է, նույնիսկ՝ ավագ սերնդի շրջանում: Նախատեսված 12 հոգու փոխարեն ընտրվել են 19 մասնակիցներ Գավառի, Մարտունու, Սևանի տարածաշրջաններից:
- ✓ Գեղարքունիքի մարզպետը, որպես բանախոս, մասնակցեց ծրագրին, որը երիտասարդների համար լրացուցիչ մոտիվացիա էր:
- ✓ Երկօրյա դասընթացներից հետո մասնակիցները ցանկություն հայտնեցին՝ նոր թեմաներ ընտրել և ամեն շաբաթ օնլայն հարթակում քննարկել: Դասընթացի հաջորդ շաբաթում նրանք քննարկեցին §Հասարակության մասնակցության կարևորությունը բնապահպանական որոշումների կայացման գործում¦, որն անցավ խաղ-քննարկման միջոցով:
- ✓ Քարտեզագրման հմտությունների շնորհիվ քարտեզագրվել են ՍԵԳԱՄԱ կլաստերի 70տոկոս ենթակառուցվածքները և կազմվել 40 շերտանոց քարտեզ, որտեղ ընդգրկված են ՍԵԳԱՄԱ-ի հյուրատներ, հյուրանոցներ, դեղատներ, լցակայաններ, հուշարձաններ, հոսթելներ, խանութներ, հիվանդանոցներ, զվարճանքի վայրեր, զուգարաններ, պատմամշակութային հուշարձաններ, եկեղեցիներ, մատուռներ, լեռներ, բանկեր, բանկոմատներ, կամուրջներ և այլն:
- ✓ Որպես լրացուցիչ արդյունք, 6 ավել գծված երթուղիները, 3-ի փոխարեն ունենալով 9-ը երթուղի,
- ✓ Նորաստեղծ ակումբը, որի ստեղծման անդրանիկ նիստը տեղի ունեցավ փորձնական արշավներից մեկի ժամանակ

Ծրագրի ընթացքում առաջացած մարտահրավերներն ու խոչընդոտները, դրանց լուծումները

Ծրագրի համար մարտահրավեր է երկրում տիրող իրավիճակը և կարանտինը: Բոլորիս՝ թե Ծրագրային թիմի, թե՛ ծրագրի մասնակիցների համար, առցանց դասընթացներ կազմակերպելը, իրականացնելն ու մասնակցելն իրոք մարտահրավեր էր, բայց փորձեցինք, ու ստացվեց:

Իհարկե, ոչ բոլոր դասընթացները հնարավոր եղավ իրականացնել առցանց, քանի որ օրինակ քարտեզագրման դասընթացների ընթացքում մասնակիցներին անհրաժեշտ էին հատուկ հմտություններ՝ տեխնիկայից օգտվելու, հատուկ ծրագրեր, որոնք պետք է դեմ առ դեմ արվեին:

Օրինակ, Դասընթացներից 1-ը՝ քարտեզագրումը, իրականացրեցինք դեմ առ դեմ, որի դասընթացի իրականացման ժամկետը մեկ ամսով հետաձգեցինք՝ դոնորի թույլտվությամբ, իսկ քայլարշավի իրականացումը դեպի Թաքնված ջրվեժի արահետ՝ 15 օրով:

Իսկ ամենամեծ ու հաճելի խոչընդոտը դա փարձնական երթուղիների ժամանակ միշտ տեղացող անձրևներն ու ամպրոպներն էին, որը մեզ հաճելիորեն այցելեց նաև ծրագրի փակման, վերջնական արշավի ժամանակ: Դրա հետ կապված նույնիսկ որոշել էինք ծրագիրն անվանել §Թաց Ավազան¦ ☺:

2. Արդյունքներ և մշտադիտարկման տվյալներ

Վերջնական արդյունքների մասին արդեն կարող ենք գնահատական տալ, քանի որ ծրագիրն ավարտվել է: Եվ նշենք, որ արդյունքները գերազանցել են սպասելիքները.

Ծրագրի ավարտին ունենք.

- Նախատեսված 3 երթուղու փոխարեն ունենք 9 երթուղի, որոնցից 5-ը քայլարշավային, 4-ը՝ հեծանվային(կից ֆայլով կարող եք տեսնել)
- Բաց Ավազան զբոսաշրջության զարգացման կրթական ակումբը

Ծրագրի ընթացքում ստեղծված 6 լրացուցիչ երթուղիները, ակումբը դրանք ծրագրի հավելյալ արժեքն են, որոնք հետագայում կզարգացվեն ակումբի գործունեության միջոցով, երթուղիների համար կմշակվեն նոր տուրփաթեթներ, իսկ ակումբի գործունեությունը կդրվի բնականոն հունի մեջ:

Ծրագրի ընթացքում ձեռք բերված արշավային պարագաները ծառայել են ամբողջ ծրագրի ընթացքում, որոնք ՀԿ-ի համար ռեսուրս կհանդիսանան հետագայում արշավների կազմակերպման համար, որորնք նաև կօգտագործվեն ակումբի աշխատանքներում:

<u>Մշտադիտարկման համար</u> պետք է մշակվեր մշտադիտարկման ժամանակացույց՝ գործողությունների իրականացման և արդյունքին ուղղված ցուցանիշներով, սակայն աշխարհում տիրող իրավիճակից ելնելով պլանները փոխվեցին ծրագրի իրականացման ընթացքում: Մշտադիտարկման համար ծրագրի կառավարման թիմը որոշեց այդ գործընթացն իրականացնել ամբողջ թիմով, օգտագործելով առցանց հանդիպման մեթոդը, որից հետո շաբաթը մեկ անգամ օնլայն ZOOM հարթակում անցկացվեցին հանդիպում-քննարկումներ, որոնց ընթացքում քննարկվել են ամեն շաբաթյա պլաններն ու գործողությունները՝ կախված իրավիճակից:

Փորձագետները դասընթացներից հետո անընդհատ կապի մեջ են եղել մասնակիցների հետ, ովքեր այդ ընթացքում, օրինակ, հավաքագրում էին պատմություններ-լեգենդներ, սովորում անգլերեն-հայերեն բառանով երկխոսություններ կազմել և այլն:

Այս ընթացքում ամբողջ տեղեկատվությունը նախապես ուղարկվել է դոնորին հաստատման, որից հետո նոր իրականացվել են ծրագրային քայլերը:

Առկա են բոլոր դասընթացների մոդուլները, օրակարգերը, պրեզենտացիաները, լուսանկարները, ձայնագրությունները, որոնք ամբողջական փաթեթով կներկայացվեն դոնորին վերջնական հաշվետվության հետ միասին, երբ արդեն բոլոր դասընթացներն ավարտված կլինեն:

Ծրագրի վերջում կազմվել է առցանց կարծիք-հարցաշար, որը ներառել է ամբողջ ծրագրի գործողությունները: Կից կարող եք տեսնել նաև այս ցուցանիշները:

3. Կայունություն

Ծրագրի կայունությունը համարում ենք այն թիմը, այն վերապատրաստված 12 երիտասարդները, որոնք արդեն ունեն գիդ զբոսավարների, քարտեզագրողների հմտություններ, նորաստեղծ ակումբն է, որն էլի կրթական բաղադրիչ ունի իր մեջ և այս թիմի հետ պարբերաբար վերապատրաստման դասընթացներ կիրականացնի, այնուհետև դասընթացներ կիրականացվեն իրենց շահառու խմբերի

հետ, փորձագետի պատրաստակամությունն է հետագայում նաև աշխատելու Բաց Ավազան ակումբի շրջանակներում, ստեղծված 9 երթուղիներն են, որոնք գործարկելու համար անպայման օգտագործելու ենք ծրագրի շրջանակներում վերապատրաստված երիտասարդների ներուժը: Նաև ստեղծված այն բազմաշերտ մարզի ինտերակտիվ քարտեզը, որը նորույթ է Հայաստանում, քանի որ ոչ մի մարզ չունի այդքան վերլուծված զբոսաշրջային կարևորության տեղեկատվություն:

4. Տեսանելիություն

Նախագծի իրականացման ընթացքում ՀԿ-ի կայքում՝ www.blejan.org, պարբերաբար պատրաստվել և տեղադրվել են ծրագրի ընթացքը լուսաբանող նյութեր.

Բանահավաքություն՝ https://bit.ly/2SBCkEd,

Անգլերեն՝ https://bit.ly/3buWI0A,

Բնապահպանություն՝ https://bit.ly/2Lv1r7W,

Քարտեզագրում՝ https://bit.ly/33IyJdP, որոնք տարածվում են Ֆեյսբուք սոցիալական ցանցում արդեն առկա ՀԿ-ի էջում, որն ունի 283 հետևորդներ՝ https://www.facebook.com/blejan.org/?modal=admin_todo_tour,

Գեղարքունիքի մարզ, որն ունի 3100 անդամներ՝ https://www.facebook.com/groups/285571604799671/,

Գավառ տարածաշրջան էջերում, որն ունի 2200 անդամներ՝ https://www.facebook.com/groups/2029258623861456/:

Հրապարակումները եղել են և՛ կարճ նյութերի և՛ լուսանկարների տեսքով:

§Արմենպրես¦ գործակալությունը նույնպես անդրադարձել է ծրագրի բնապահպանության դասընթացին. https://armenpress.am/arm/news/1015605.html: Ծրագրի մասին հոդված է հրապարակվել §Գեղամա աշխարհ¦ մարզային թերթում:

Ստեղծվել է Բաց Ավազան բլոգը, որտեղ ներառված են ծրագրի հետ կապված բոլոր պրոդուկտները https://bit.ly/2DspYdr, արշավներ, լուսանկարներ, քարտեզներ, վիդեոներ, լեգենդներ, թիմի մասին տվյալներ: Այն դեռ աշխատանքային է, սակայն պլանավորում ենք ակումբի աշխատանքներին զուգահետ այն դարձնել վերջնական և կիսվել ավելի լայն հանրության հետ :

5. Իրականացման պլան և բյուջե

Պայմանագրին կից Հավելված 1-ում շատ փոփոխություններ տեղի չեն ունեցել, միայն քարտեզագրման դասընթացների և արշավի ժամկետներն են տեղափոխվել, համապատասխանաբար մեկ ամիս և 15 օր ժամկետներով: Ծրագրով նախատեսված բոլոր գործողություններն իրականացվել են:

Հավելված 2-ում նույնպես կատարվել են փոփոխություններ՝ 2 անգամ, դոնորի համաձայնությամբ (կից կարող եք տեսնել բյուջեի փոփոխված ֆայլերը և դոնորին ուղղված գրություններն այդ մասին՝ N003-08.05.2020թ.և N007-27.07.2020թ.):

Ծրագրի ամբողջ ընթացքի մասին լուսանկարները կարող եք տեսնել կից հղումով՝
https://www.flickr.com/photos/188963475@N04/albums

ՀԿ նախագահ, ծրագրի ղեկավար՝ Լիաննա Ասոյան, 08.05.2020թ.

Նախագծի մոնիթորինգի ցուցանիշներ

Նախագծից բխող ցուցանիշներ	*Քանակական ցուցանիշներ*	*ԵՄ հանուն մշակույթի ծրագրից բխող ցուցանիշբեր*	*Քանակական ցուցանիշներ*
Նախագծի շահառուների թիվը /ուղղակի և անուղղակի, այդ թվում ՏԻՄ, բիզնես, համայնք, այլ/ըստ տեսակի/ հանդիպման մասնակից, քննարկման մասնակից, այլ/	Ուղղակի շահառուներ 30 մարդ Անուղղակի շահառուներ 150 Տարածքային և ՏԻՄ 7 Բիզնես 10	Նախագծի շրջանակներում ստեղծված աշխատատեղեր /եթե կան/, տեսակները, տեղակայումը, ծամկետայնությունը	Ստեղծվել է 11 ժամանակավոր աշխատատեղ Ծրագրի ղեկավար -1 Ծրագրի համակարգող- 1 Հաշվապահ- 1 Թարգմանիչ- 1 Բազայի պատասխանատու-1 Փորձագետներ – 2 Վարորդներ-4
Նախագծի շրջանակներում իրականացված միջոցառումների /հանդիպումների թիվը, որոնք ներգրավել են հանրային և մասնավոր շահառուներին:	2 միջոցառում, որից 1-ը՝ քարտեզագրման ինտերակտիվ դասընթացն էր, մյուսը՝ ծրագրի փակում-ավարտական երթուղու քայլարշավը	Նախագծի շրջանակներում ստեղծված պրոդուկտները /ասոցացիա, ռազմավարություն, երթուղի, շտեմարան, այլ/	Ստեղծվել է. - տուրիզմի ոլորտի անգլերեն հայեեն շուրջ 200 բառից բաղկացած բառարան/նախատեսված 100-ի փոխարեն/ և երկխոսությունների շտեմարան - 9 երթուղի -նկարների շտեմարան

Նախագծի շրջանակներում իրականացված դասընթացների թիվը, ըստ տեսակի /քարտեզագրում, պատմությունների հավաքագրում, այլ/ Դասընթացների շրջանակներում իրականացված դասընթացների մասնակիցների թիվը, ըստ խմբերի	7 դասընթաց, որից . 2-ը՝ Բանահավաքություն 2-ը՝ Անգլերեն 3-ը՝ Բնապահպանություն 8-ը՝ Քարտեզագրում Մասնակիցների միջին թիվը՝ 30	ՏԻՄ և մարզային կառույցների հետ համագործակցության հիմնական մեխանիզմներ	Ծրագրի սկզբից համագործակցել ենք մարզպետարանի հետ: Ծրագիրը ներկայացրել մարզպետին, պայմանավորվածություն ձեռք բերել համագործակցել ամբողջ ծրագրի ընթացքում: Մարզպետը վարել է բնապահպանության 2 օրյա դասընթացներից 1-ը:
Ստեղծված/պատրաստված նոր երթուղիների թիվ	9 երթուղի, որից. 5-ը՝ քայլարշավային, 4-ը՝ հեծանվային	Հայտատու և համահայտատու ՀԿ-ների ֆինանսավորման այլ աղբյուրները:	Հայտատու կազմակերպության ներդրումը. -Գրասենյակի տարածքի վարձակալությունը -Հեռախոսի վճարը -ՀԿ-ի կայքի հոսթինգը և անվտանգությունը
Ստեղծված նյութեր, ըստ տեսակի /ֆոտո, վիդեո, այլ/	Առկա են ֆոտոներ, որոնք և՛ հրապարակվել են, և՛ ուղարկվել դոնորին, դրանք հասանելի են այս հղումով՝ https://www.flickr.com/photos/188963475@N04/albums		

Ստեղծված նյութերի հանրայնացում ըստ տեսակի և քանակի /տպագրություն, հարթակներ, բլոգներ/	-7 նյութ հրապարակվել է ՀԿ-ի կայքում, որը կիսվել և տարածվել է ՀԿ-ի ՖԲ էջում, որից հետո տարածվել է մասնակիցների անձնական էջերով, -1 նյութ հրապարակվել է Արմենպրեսի կայքով, -1 նյութ էլ տպագրվել է Գեղարքունիքի մարզային թերթում: -Ստեղծվել և գործարկվել է ծրագրի համանուն բլոգը և ծրագրի էջը, որոնք դեռ աշխատանքային են, ավարտական տեսքի բերելուց հետո կդառնան հանրային		